

Կանխիկով գործարքներ

Կանխիկի մուտքագրում մասնաճյուղերում	Անվճար
Կանխիկի մուտքագրում բանկոմատի միջոցով ¹	Անվճար
Կանխիկ մուտքագրված գումարների կանխիկացում (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո) ¹	Անվճար
Անկանխիկ գումարների կանխիկացում ՀՀ դրամով ²	0.2%, նվազագույնը 1,000 ՀՀ դրամ
Անկանխիկ գումարների կանխիկացում ԱՄՆ դոլարով/եվրոյով ³	
• մինչև 1,000 միավոր	2,000 ՀՀ դրամ
• 1,000 միավոր և ավելի	0.5%
Այլ արժույթներով	1.5%, նվազագույնը 2,000 ՀՀ դրամ
Արտարժույթով հնամաշ/շրջանառությունից դուրս եկած թղթադրամների փոխանակում, եթե պահպանված են անհրաժեշտ պաշտպանական հատկանիշները և մասերը ⁴	5%

¹ Կանխիկի մուտքագրման առավելագույն օրական սահմանաչափը՝ 1,000,000 ՀՀ դրամ բանկոմատային քարտին կցված յուրաքանչյուր հաշվին:

² Այլ արժույթների համար տես անկանխիկ գումարների կանխիկացման սակագները:

³ Փոխանակման, հաճախորդի այլ հաշիվներից փոխանցման կամ Բանկի կողմից տրամադրված վարկային գումարների (բացառությամբ կրեդիտ քարտերի) դեպքում չի կիրառվում:

⁴ Ծառայությունը տրամադրվում է միայն Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի հաճախորդներին:

Կարևոր ծանուցում հաճախորդի կողմից իրականացվող գործարքների վերաբերյալ

Հարգելի հաճախորդ,

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ), կարևորելով փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի շրջանակներում Էյչ-Էս-Բի-Սի Խմբի և Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի պահանջները, սահմանել է մի շարք ներքին ընթացակարգեր և կանոնակարգեր, որոնք ուղղված են հաճախորդների կողմից իրականացվող գործարքների վերաբերյալ անհրաժեշտ տվյալների և փաստաթղթերի հավաքագրմանը՝ տվյալ գործարքի միջոցների ծագման աղբյուրը և գործարքի նպատակը պարզելու համար:



Այս նպատակով Բանկը կարող է գործարքներ իրականացնող հաճախորդներից պահանջել տրամադրել լրացուցիչ տեղեկություններ գործարքի միջոցների ծագման աղբյուրի և գործարքի նպատակի վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում խնդրել տրամադրել միջոցների ծագման աղբյուրը և գործարքի նպատակը հավաստող փաստաթղթեր:

Հաճախորդի կողմից վերը նշված տեղեկատվության կամ փաստաթղթերի չտրամադրման դեպքում Բանկն իրավունք ունի մերժել տվյալ գործարքի իրականացումը:

Բանկի և հաճախորդի իրավունքները և պարտականությունները ֆինանսական հանցագործությունների և փողերի լվացման կանխարգելման շրջանակներում կարգավորվում են Բանկի Հաճախորդների բանկային հաշիվների, բանկային ավանդների, էլեկտրոնային բանկային ծառայությունների և բանկային այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմանների (այսուհետ՝ Հիմնական պայմաններ) «Ընդհանուր դրույթներ» բաժնի 1.17. կետի, ինչպես նաև Հիմնական պայմաններին կից Հավելված 1-ով՝ «Ֆինանսական հանցագործության ռիսկի կառավարման գործողությունների և հարկային համապատասխանության կապակցությամբ հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման և օգտագործման պայմանների» պահանջներով:

Առավելագույնս կարևորելով հաճախորդների սպասարկման անվտանգությունը և ֆինանսական հանցագործությունների կանխարգելումը՝ Բանկն ակնկալում է Ձեր համագործակցությունը գործարքների իրականացման ժամանակ պահանջվող տեղեկատվության և փաստաթղթերի տրամադրման հարցում:

Արտարժույթի փոխանակման իրականացում

Հարգելի Հաճախորդ,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ սկսած 2015թ. մայիսի 5-ից «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հաշվետեր չհանդիսացող անձինք Բանկում կարող են իրականացնել արտարժույթի փոխանակում միայն անձը հաստատող վավեր փաստաթղթի առկայության դեպքում: Անձը հաստատող փաստաթղթերի ցանկը սահմանված է «Անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ» ՀՀ կառավարության 22.12.1999թ. N 767 որոշմամբ:

Նշենք նաև, որ արտարժույթի փոխանակման առավելագույն սահմանաչափը կազմում է օրական 400,000 ՀՀ դրամ (կամ դրա համարժեքն այլ արժույթով):

Հարցերի դեպքում խնդրում ենք դիմել Բանկի մասնաճյուղի աշխատակցին կամ զանգահարել + 374 60 655 000 հեռախոսահամարով:

Թարմացվել է՝ 19/01/2019 15:00